



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 07 (171) «29» հունիսի 2019թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼՂՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
45	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 29-Ն որոշումը	
46	«Արցախի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները սահմանելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 30-Ն որոշումը	
47	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 62 Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 35-Ն որոշումը	
ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼՂՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
48	«Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության գյուղատնտեսական համատարած հաշվառման գործառնական ստորաբաժանում ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» ԱՀ վիճակագրության պետական խորհրդի N 9-Ն որոշումը	
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		

49	«Ծերերի և հաշմանդամների խնամք իրականացնող տուն-ինտերնատին հատկացվող, խնամվողների խնամքի և սոցիալական սպասարկման անհրաժեշտությունից ելնելով, առանձին ապրանքատեսակների ցանկը հաստատելու մասին» ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի N 4-Ն հրամանը	
50	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 31-ի N 333-Ն որոշման կիրարկումն ապահովելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարի 2011 թվականի հուլիսի 05-ի N 12/Գ-Ն (Ն) հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի N 5-Ն հրամանը	
51	«Արցախի Հանրապետության կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից դասակարգման լրացուցիչ ցուցանիշները մշակելու մասին» ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի և ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N175-Ն և N 5-Ն համատեղ հրամանը	
52	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի հունվարի 22-ի N 4-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 150-Ն հրամանը	
ՀԱՏՈՒՎ ԲԱԺԻՆ		
	Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից լիցենզիաներ տրամադրելու և որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշումների պատճենները	
	ԱՀ առողջապահության նախարարի կողմից լիցենզիա տրամադրելու և լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանների պատճենները	
	ԱՀ գյուղատնտեսության նախարարի կողմից տրված լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին հրամանի պատճենը	
	ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից մայիս ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ	
	ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից մայիս ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ	

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 2019 թվականի հունիսի 11-ին
Պետական գրանցման համարը 3031944

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» մայիսի 2019 թվականի

N 29-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 26-Ի N 18-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 14Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 18-Ն որոշման հավելվածի 5-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Հանձնաժողովն իրավասու է նաև վերանայման ժամանակ սակագները որոշմամբ թողնել անփոփոխ, եթե գործող և հաշվարկային սակագների տարբերությունը չի գերազանցում հինգ տոկոսի շեմը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՎԻՐԱԲՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 2019 թվականի հունիսի 11-ին
Պետական գրանցման համարը 3031945

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» մայիսի 2019 թվականի

N 30-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ
ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
ՎԱՃԱՌՔԻ ՄԱԿԱԳՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «ա» կետը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 14Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 18-Ն որոշման հավելվածի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի 1-ին կետում նշված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի համար սահմանել՝

1) բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 23,536 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) ոռոգման համակարգերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 15,689 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 10,461 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4) հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 42,258 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

5) կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 42,258 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

6) արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 42,258 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված սակագները կգործեն 2017 թվականի հունվարի 1-ից հետո էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 2019 թվականի հունիսի 29-ին
Պետական գրանցման համարը 3031950

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հունիսի 2019 թվականի

N 35-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 62 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի ««Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մատուցվող տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների առավելագույն սակագները սահմանելու մասին» թիվ 62Ն որոշման հավելվածի աղյուսակ 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հավելված

Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի
2019 թվականի հունիսի 26-ի N 35-Ն որոշման

«ԱՌԱՎԵԼԱԳՈՒՑՆ ՄԱԿԱԳՆԵՐ»

**«ՂԱՐԱԲԱՂ ՏԵԼԵԿՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍՈՒՑՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՎ
ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Աղյուսակ 1

Հ/Հ	Ծառայությունների անվանումները	Սակագինը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, ՀՀ դրամ	
		Միացման վարձ	Անսովճար
		ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1	Անսահմանափակ սակագնային փաթեթներ		
1)	Wi-Fi երթուղիչների միջոցով ինտերնետի միացում		
ա.	մինչև 512/512 կբիթ/վրկ արագությամբ	անվճար	2 520*
բ.	մինչև 1024/1024 կբիթ/վրկ արագությամբ		4 000*
գ.	մինչև 2048/2048 կբիթ/վրկ արագությամբ		5 350*
դ.	մինչև 3072/3072 կբիթ/վրկ արագությամբ		7 250*
ե.	մինչև 5120/5120 կբիթ/վրկ արագությամբ		10 200*
զ.	մինչև 8192/8192 կբիթ/վրկ արագությամբ		15 700*
2)	DSL մոդեմով ինտերնետի միացում (ներբեռնման արագություն/բեռնման արագություն)		
ա.	մինչև 512/512 կբիթ/վրկ արագությամբ	անվճար	2 850*
բ.	մինչև 1024/1024 կբիթ/վրկ արագությամբ		4 000*
գ.	մինչև 2048/2048 կբիթ/վրկ արագությամբ		5 350*
դ.	մինչև 3072/3072 կբիթ/վրկ արագությամբ		7 250*
ե.	մինչև 5120/5120 կբիթ/վրկ արագությամբ		10 200*
զ.	մինչև 6144/6144 կբիթ/վրկ արագությամբ		13 800*

3)	Օպտիկամանրաթելային մալուխով ինտերնետի միացում (ներբեռնման արագություն/բեռնման արագություն)		
ա.	410/410 կբիթ/վրկ մինչև 512/512 կբիթ/վրկ արագությամբ	անվճար	2 400*
բ.	820/820 կբիթ/վրկ մինչև 1024/1024 կբիթ/վրկ արագությամբ		2 800*
գ.	1640/1640 կբիթ/վրկ մինչև 2048/2048 կբիթ/վրկ արագությամբ		4 500*
դ.	2460/2460 կբիթ/վրկ մինչև 3072/3072 կբիթ/վրկ արագությամբ		6 500*
ե.	4100/4100 կբիթ/վրկ մինչև 5120/5120 կբիթ/վրկ արագությամբ		8 800*
զ.	4920/4920 կբիթ/վրկ մինչև 6144/6144 կբիթ/վրկ արագությամբ		13 800*
է.	9220/9220 կբիթ/վրկ մինչև 10240/10240 կբիթ/վրկ արագությամբ		18 000*
ը.	18430/18430 կբիթ/վրկ մինչև 20480/20480 կբիթ/վրկ արագությամբ		30 000*
թ.	27650/27650 կբիթ/վրկ մինչև 30720/30720 կբիթ/վրկ արագությամբ		42 000*
4)	Մեծածախ IP տարանցում		
ա.	Երաշխավորված մուտք 1024 կբիթ/վրկ արագությամբ (կետից կետ)	անվճար	40000
5)	«Գիշերային ծառայություն» հավելյալ ծառայություն (ժամը 24:00-09:00-ն արագության կրկնապատկում)		
ա.	մինչև 512/512 կբիթ/վրկ արագությամբ	անվճար	1000
բ.	մինչև 1024/1024 կբիթ/վրկ արագությամբ		1000
գ.	մինչև 2048/2048 կբիթ/վրկ արագությամբ		1500
դ.	մինչև 3072/3072 կբիթ/վրկ արագությամբ		1500

* ներառյալ մեկ IP հասցե

Հաճախորդի հետ մեկ տարի գործողության ժամկետով անսահմանափակ սակագնային փաթեթների պայմանագիր կնքելու դեպքում DSL մոդեմը տրամադրվում է անվճար, իսկ պայմանագրի մեկ տարին լրանալուց հետո տրամադրված DSL մոդեմը դառնում է բաժանորդի սեփականությունը:» :

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2019 թվականի հունիսի 10-ին
Պետական գրանցման համարը 3011943

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մայիսի 2019 թվական

N 9-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ և 6-րդ հոդվածները, «Արցախի Հանրապետության 2018-2020 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության օրենքով հաստատված պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի 8-րդ մասի 8-րդ կետը, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 19-ի N 276-Ն որոշումը, և ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով, 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 10-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մարտի 1-ի N 12 որոշմամբ հաստատված Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրության 37-րդ կետի 4-րդ ենթակետով, Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **որոշում է.**

1. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների իրականացման, 2019 թվականին փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման և 2020 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման նպատակով 2019 թվականի հուլիսի 1-ից ստեղծել գյուղատնտեսական համատարած հաշվառման գործառնական ստորաբաժանում՝ վարչության կարգավիճակով (այսուհետ՝ վարչություն):

2. Հաստատել վարչության կանոնադրությունը և կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ վարչությունը ենթակա է լուծարման գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքների ավարտից հետո:

ՆԱԽԱԳԱՀ՝

Ս.ՄԻՆԱՍՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության գյուղատնտեսական համատարած հաշվառման գործառնական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) գործառնական ստորաբաժանում է, որը «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նախապատրաստում և անցկացնում է գյուղատնտեսական համատարած հաշվառում՝ Արցախի Հանրապետության տարածքում, ինչպես նաև իրականացնում է գյուղատնտեսական համատարած հաշվառման ամփոփ տվյալների հրապարակումը:

2. Վարչությունը ստեղծվում և նրա գործունեությունը դադարեցվում է Արցախի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ:

Վարչությունը գործում է իր կանոնադրությանը համապատասխան, որը Ծառայության նախագահի ներկայացմամբ հաստատում է Խորհուրդը:

3. Վարչության գործունեությունը դադարում է գյուղատնտեսական համատարած հաշվառման և արդյունքների հրապարակման աշխատանքների ավարտից հետո:

4. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին», «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներին, Արցախի Հանրապետության կառավարության որոշումներին, Խորհրդի որոշումներին, (Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական) Ծառայության նախագահի հրամաններին և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Վարչության խորհրդանշանը հետևյալն է՝



Խորհրդանշանն իրենից ներկայացնում է ձախից եռագույնի, աջից՝ ցորենի հասկի եզրագծերով շրջանաձև պատկեր: Խորհրդանշանի վերևի աջ մասում պատկերված է «2020» թիվը՝ գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման տարեթիվը, իսկ կենտրոնական մասում՝ «ԱՀ ԳՀՀ» տառերը՝ «Արցախի Հանրապետության գյուղատնտեսական համատարած հաշվառում» բառերի հապավումները:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչության հիմնական խնդիրը Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման ու անցկացման կազմակերպումն է:

7. Վարչությունն իր հիմնական խնդրին համապատասխան՝

1) մշակում է գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստմանն ու անցկացմանն առնչվող Արցախի Հանրապետության կառավարության և Խորհրդի որոշումների նախագծերը,

2) մշակում է գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման, նյութերի մշակման և արդյունքների հրապարակման ժամանակացույցի նախագիծը,

3) կազմակերպում է գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների սպառողների հետ աշխատանքները և գյուղատնտեսական համատարած հաշվառումը լուսաբանող զանգվածային բացատրական աշխատանքները,

4) առաջարկություն է ներկայացնում Խորհրդին գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման մեթոդի ընտրության վերաբերյալ,

5) ապահովում է ԱՀ քաղաքների և գյուղական համայնքների/բնակավայրերի քարտեզագրական նյութերի պատրաստումը,

6) ապահովում է շրջաններում գյուղատնտեսական համատարած հաշվառման կազմակերպման պլանների/նախագծերի կազմումը,

7) կազմակերպում է գյուղատնտեսական համատարած հաշվառման միավորների (գյուղաբնակ անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններ, այգեգործական ընկերությունների անդամների անհատական տնտեսություններ, գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքացիների անհատական տնտեսություններ, անհատ ձեռնարկատերեր, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, խմբային տնտեսություններ) ցուցակների կազմման աշխատանքները,

8) ապահովում է գյուղատնտեսական համատարած հաշվառման հարցաշարերի (հարցաթերթերի) և էլքային աղյուսակների ծրագրերի նախագծերի մշակումը,

9) կազմակերպում է անցկացնում է փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում,

10) ապահովում է մուտքագրման, տվյալների ավտոմատ խմբագրման մեքենայական ծրագրերի մշակումը և իրականացնում վիճակագրական տվյալների մեքենայական մշակումը,

11) ապահովում է հավաքագրված և մուտքագրված տվյալների հիման վրա՝ համատարած տվյալների պահոցների (բազաների) կառուցումը,

12) ապահովում է էլքային աղյուսակների ստացումը և ամփոփ տվյալների հրապարակումը,

13) իրականացնում է գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման, նյութերի մշակման, ամփոփման հետ կապված այլ գործառնություններ:

8. Իր հիմնական խնդրի իրագործման ընթացքում Վարչությանը գիտամեթոդական օժանդակության և խորհրդատվության տրամադրումն իրականացվում է (Արցախի Հանրապետության վիճակագրության պետական) Խորհրդի անդամների կողմից:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության կառուցվածքի մեջ մտնում են՝

1) գյուղատնտեսական համատարած հաշվառման կազմակերպական աշխատանքների բաժինը.

2) տվյալների մշակման և վերահսկողության բաժինը:

10. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է վարչության պետը:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման առնչվող գործառույթների մասով վարչության աշխատանքները համակարգում են Ծառայության նախագահի տեղակալը, Խորհրդի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը համակարգող և Խորհրդի միկրոէկոնոմիկա և տնտեսական գործունեության տեսակներ, բնապահպանություն բնագավառները համակարգող անդամները (այսուհետ՝ համակարգողներ):

Համակարգողների միջև իրավասությունների բաշխումն իրականացվում է Ծառայության նախագահի կողմից:

Վարչության պետը հաշվետու է Խորհրդին, Ծառայության նախագահին և համակարգողներին:

11. Վարչության պետը.

1) ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման համար.

2) գյուղատնտեսական համատարած հաշվառման կազմակերպական հարցերով համապատասխան համակարգողի համաձայնությամբ առաջարկություններ է ներկայացնում Ծառայության նախագահին.

3) ապահովում է աշխատանքային համագործակցությունը Վարչության և աշխատակազմի ստորաբաժանումների միջև, գիտամեթոդական գործառույթների մասով գործողությունները համաձայնեցնում է (Արցախի Հանրապետության վիճակագրության պետական) Խորհրդի անդամների հետ.

4) ապահովում է գյուղատնտեսական համատարած հաշվառման արխիվացված նյութերի հանձնումը աշխատակազմին՝ Վարչության գործունեության դադարեցումից առաջ.

5) իր իրավասության սահմաններում առաջարկություններ է ներկայացնում Ծառայության նախագահին՝ Վարչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ.

6) Ծառայության նախագահին, համապատասխան համակարգողին ներկայացնում է տեղեկատվություն՝ Վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին,

7) Ծառայության նախագահի հաստատման է ներկայացնում գյուղատնտեսական համատարած հաշվառման դաշտային աշխատանքներում ներգրավված աշխատակիցների աշխատատեղերի ցուցակը.

8) ապահովում է Ծառայության նախագահի հրամանների և հանձնարարականների, ինչպես նաև համակարգողների ցուցումների ու առաջադրանքների կատարումը:

12. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժնի պետերից մեկը:

13. Գյուղատնտեսական համատարած հաշվառման կազմակերպական աշխատանքների բաժինը.

1) մշակում է գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստմանն ու անցկացմանն առնչվող ԱՀ կառավարության և Խորհրդի որոշումների նախագծերը.

2) իրականացնում է գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման մեթոդի ընտրությունը, գյուղատնտեսական հաշվառման որակի բարձրացման և վերահսկման ծրագրերի պլանավորումը.

3) իրականացնում է գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման, նյութերի մեքենայական մշակման և հրապարակ-

ման աշխատանքների ժամանակացույցի, գյուղատնտեսական հաշվառման հարցաշարերի (հարցաթերթերի), մեթոդաբանական և հրահանգչական փաստաթղթերի, հաշվետվական ձևերի նախագծերի մշակումը.

4) նախապատրաստում և մշակում է գյուղատնտեսական համատարած հաշվառման զանգվածային լուսաբանումն ապահովող տեղեկատվական նյութեր.

5) պատրաստում է փորձնական գյուղատնտեսական հաշվառման անցկացման մեթոդական և հրահանգչական փաստաթղթերի նախագծերը.

6) իրականացնում է հիմնական հրահանգչական և հաշվետվական փաստաթղթերի վերախմբագրում՝ փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների հիման վրա.

7) (Արցախի Հանրապետության վիճակագրության պետական) Խորհրդի անդամների հետ համատեղ իրականացնում է գյուղատնտեսական համատարած հաշվառումն իրականացնող ղեկավար կադրերի հրահանգավորումները և մեթոդական աջակցության հետ կապված աշխատանքները գյուղատնտեսական հաշվառման նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ողջ ժամանակաշրջանում.

8) ապահովում է գյուղատնտեսական համատարած հաշվառման նախնական արդյունքների ստացումը (գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ)՝ ամփոփ ցուցանիշների համադրմամբ.

9) ապահովում է Արցախի Հանրապետության քաղաքների և խոշոր գյուղական համայնքների քարտեզագրական նյութերի պատրաստումը.

10) կազմակերպում է գյուղատնտեսական համատարած հաշվառման միավորների (գյուղաբնակ անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններ, այգեգործական ընկերությունների անդամների անհատական տնտեսություններ, գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակների անհատական տնտեսություններ, անհատ ձեռնարկատերեր, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, խմբային տնտեսություններ) ցուցակների կազմման աշխատանքները.

11) իրականացնում է շրջանների գյուղատնտեսական համատարած հաշվառման կազմակերպման պլանների/նախագծերի կազմման աշխատանքները.

12) ապահովում է գյուղատնտեսական համատարած հաշվառման դաշտային աշխատանքների սահմանված ժամկետներում և կարգով իրականացումը.

13) կազմակերպում է գյուղատնտեսական համատարած հաշվառումը լուսաբանող զանգվածային բացատրական աշխատանքները շրջաններում.

14) կազմակերպում է շրջաններից գյուղատնտեսական համատարած հաշվառման լրացված հարցաթերթերի և դրանց ուղեկցող ամփոփ և հաշվետվական ձևերի տեղափոխումը Վարչություն՝ սահմանված կարգով և ժամկետներում.

15) կատարում է ծառայության նախագահի, համակարգողների, վարչության պետի՝ իրենց իրավասության սահմաններում տրված հանձնարարականները:

14. Տվյալների մշակման և վերահսկողության բաժինը.

1) մշակում է էլքային աղյուսակների ստացման համար տեխնիկական առաջադրանքները և էլքային աղյուսակների ձևաչափերը.

2) իրականացնում է գյուղատնտեսական հաշվառման տվյալների թվային ծածկագրման գործընթացը, դրանց համար անհրաժեշտ մեթոդական հրահանգների մշակումը և սահմանում է համապատասխան դասակարգիչների կիրառման ցանկը.

3) նախապատրաստում է գյուղատնտեսական համատարած հաշվառման հրապարակումները՝ թղթային և էլեկտրոնային կրիչներով.

4) ապահովում է գյուղատնտեսական համատարած հաշվառման հարցաթերթերը պարունակող պայուսակների գրանցման, տվյալների մուտքագրման, տվյալների ավտոմատ խմբագրման և էլքային աղյուսակների ստացման մեքենայական ծրագրերի մշակումը.

5) իրականացնում է գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների մեքենայական մշակման գործընթացը.

6) հավաքագրված և մուտքագրված տվյալների հիման վրա կառուցում է գյուղատնտեսական հաշվառման միկրոտվյալների և մակրոտվյալների բազաները.

7) իրականացնում է տվյալների մեքենայական մշակման գործընթացի վերահսկման գործառույթները.

8) ապահովում է էլքային տվյալների ստացումը.

9) պատրաստում է գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքներն ամփոփող ժողովածուները.

10) աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է գյուղատնտեսական համատարած հաշվառման դաշտային աշխատանքներում ներգրավված աշխատակիցների անհատական աշխատանքային հարաբերությունների ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրումը, անհատական իրավական ակտերի նախագծերի կազմումը և Ծառայության աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնին տրամադրումը.

11) իրականացնում է գյուղատնտեսական համատարած հաշվառման շրջանակում տրամադրված ֆինանսական միջոցների ծախսերի հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի հավաքագրումը, դրանց հաշվապահական ձևակերպումը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կազմումը և Ծառայության հաշվապահական հաշվառման բաժնին տրամադրումը.

12) սահմանված ժամկետում է ներկայացնում է ձեռքբերված բենզինի բաշխման ցանկը և Վարչության տրամադրության տակ գտնվող տրանսպորտային միջոցների ուղեգրերը,

13) ապահովում է Վարչությանը հանձնված ապրանքանյութական արժեքների պահեստավորումը, դրանց շարժի փաստաթղթային ձևակերպումը.

14) Ծառայության աշխատակազմի Ստեփանակերտ քաղաքի և տարածքային բաժիններին ապահովում է գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համար անհրաժեշտ նյութերով, հրահանգչական և հաշվետվական փաստաթղթերով.

15) կատարում է ծառայության նախագահի, համակարգողների, վարչության պետի՝ իրենց իրավասության սահմաններում տրված հանձնարարականները.

16) ապահովում է գյուղատնտեսական հաշվառման նյութերի արխիվացումը և դրանց հանձնումը աշխատակազմին՝ Վարչության գործունեության դադարեցումից առաջ:

15. Գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության աշխատակիցների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով: Վարչության պետի, բաժինների պետերի և մյուս աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են Ծառայության նախագահի կողմից՝ համապատասխան համակարգողի առաջարկությամբ:

16. Գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության հաստիքացուցակը հաստատվում է յուրաքանչյուր տարի՝ Ծառայության նախագահի հրամանով:

**Արցախի Հանրապետության
Ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի ղեկավար՝**

Լ. Հարությունյան

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 2019 թվականի հունիսի 14-ին
Պետական գրանցման համարը 1081946

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«31» մայիսի 2019 թվականի

№ 4-Ն

ք. Ստեփանակերտ

**ԾԵՐԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԽՆԱՍՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՈՒՆ-
ԻՆՏԵՐՆԱՏԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ, ԽՆԱՍՎՈՂՆԵՐԻ ԽՆԱՍՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼՆԵԼՈՎ, ԱՌԱՆՁԻՆ
ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-
թյան 2004 թվականի մարտի 16-ի N 84 որոշմամբ հաստատված թիվ 1
հավելվածի 14-րդ կետի 14-րդ ենթակետով և Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 16-ի N 618
որոշման 1.1-ին կետով.

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ ծերերի և հաշմանդամների խնամք իրականացնող
տուն-ինտերնատին հատկացվող, խնամվողների խնամքի և սոցիալական
սպասարկման անրահեժշտությունից ելնելով, առանձին ապրանքատեսակ-
ների ցանկը՝ համաձայն հավելվածի:

Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
աշխատանքի, սոցիալական հարցերի և
վերաբնակեցման նախարարի
2019 թվականի մայիսի 31-ի N 4-Ն հրամանի

ՑԱՆԿ

**ԾԵՐԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆՂԱՄՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻՆ
ՀԱՏԿԱՑՎՈՂ, ԽՆԱՄՎՈՂՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼՆԵԼՈՎ,
ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՏԵՄԱԿՆԵՐԻ**

1. Հայկական արտադրության ֆիլտրով ծխախոտ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 2019 թվականի հունիսի 14-ին
Պետական գրանցման համարը 1081947

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«31» մայիսի 2019 թվականի

N 5-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄՍՑԻՄԻ 31-Ի N 333-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԻՐԱԲՆՈՒՄՆ
ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՄԻ 05-Ի N 1 Հ/Գ-Ն (Ն) ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 31-ի N 333-Ն որոշման 3-րդ կետին, որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 6-րդ ենթակետին, և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) գրավոր դիմումի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) դիմումների հաշվառման մատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) դրամական հատուցման համառոտ համակարգչային գործի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) իրավասու մարմնի կողերը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարի 2011 թվականի հուլիսի 05-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 31-ի N 333-Ն որոշման 3-րդ կետով նախատեսված ձևաթղթերը և իրավասու մարմինների կողերը հաստատելու մասին» N 1 հ/գ-ն (ն) հրամանը:

Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված 1
Արցախի Հանրապետության
աշխատանքի, սոցիալական հարցերի և
վերաբնակեցման նախարարի
2019 թվականի մայիսի 31-ի N 5-Ն հրամանի

**ՁեՎ
ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄԻ**

(իրավասու մարմնի անվանումը)

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Հաշվառման վայրը _____

Անձնագրի սերիան և համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշը կամ
հանրային ծառայությունների համարանիշ
չստանալու մասին տեղեկանքի կամ
վավեր սոցիալական ապահովության
քարտի համարը _____

Ծննդյան օրը, ամիսը, տարին _____

Հեռախոսահամարը _____

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ Ձեզ _____
(նշել ազգակցական կապը և գոհվածի (մահացածի) անունը, հայրանունը, ազգանունը)

գոհվելու (մահանալու) կապակցությամբ ինձ հատուցել հուղարկավորության կամ
գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման

(անհրաժեշտն ընդգծել)

Ծախսերը:

Դիմող՝ _____
(ստորագրությունը) _____
(անունը, ազգանունը)

_____ 20 թ.

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆԻ ՇԱՊԻԿԻ ՁԵՎԸ

_____	_____
(Իրավասու մարմնի անվանումը)	(Կողմը)
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ	
Մատյան վարելու ժամանակահատվածը՝	
սկիզբը _____ 20____թ.	ավարտը _____ 20____թ.

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 3
 Արցախի Հանրապետության
 աշխատանքի, սոցիալական հարցերի և
 վերաբնակեցման նախարարի
 2019 թվականի մայիսի 31-ի N 5-Ն հրամանի

ՁԵՎ
ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՈՐԾԻ

Հ/Հ	Ձոնված (մահացած) զինծառայողի անունը, հայրանունը, ազգանունը	Ձոնվելու (մահանալու) օրը, ամիսը, տարին	Մահվան վկայականի համարը	Դրամական ծախսերի հատուցում ստացող քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը	Դրամական ծախսերի հատուցում ստացող անձնագրի սերիան և համարը	Դրամական ծախսերի հատուցման չափը
1.						
2.						

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,
 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 4
Արցախի Հանրապետության
աշխատանքի, սոցիալական հարցերի և
վերաբնակեցման նախարարի
2019 թվականի մայիսի 31-ի N 5-Ն հրամանի

ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄՆԻ ԿՈՂԵՐԸ

Հ/Հ	Իրավասու մարմնի անվանումը	Կոդը
1.	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի Ստեփանակերտի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	01
2.	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի Ասկերանի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	02
3.	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի Մարտակերտի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	03
	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի Մարտակերտի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի Շահումյանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության համար	03.1
4.	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի Մարտունու սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	04
5.	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի Հադրութի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	05
6.	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի Շուշիի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	06
7.	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի Քաշաթաղի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	07

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 2019 թվականի հունիսի 29-ին
Պետական գրանցման համարը 2101949

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ**
«12» հունիսի 2019թ. N 175-Ն
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**
«13» հունիսի 2019թ. N 5-Ն
ք. Ստեփանակերտ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄԱՆԿՑՈՒՆԻՑ ԴԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի «Կազմակերպությունների և տարածքների՝ ըստ վտանգավորության աստիճանի, քաղաքացիական պաշտպանության խմբերի դասակարգման կարգը սահմանելու մասին» N 31-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Արցախի Հանրապետության կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից դասակարգման լրացուցիչ ցուցանիշները մշակել՝

1) հատուկ կարևորության խմբին դասվողների համար՝

ա. կազմակերպությունները, որոնք ունեն զորահավաքային խնդիր,

բ. կազմակերպությունները, որոնք օբյեկտի արտակարգ իրավիճակի տեսանկյունից հանրապետական մասշտաբի արտակարգ իրավիճակի պոտենցիալ վտանգ են ներկայացնում,

գ. կազմակերպությունները, որոնք ռազմական դրության ժամանակ պետական մասշտաբի արտադրանք են թողարկում (աշխատանք են կատարում, ծառայություններ են մատուցում)։

2) առաջին խմբին դասվողների համար՝

ա. կազմակերպությունները, որոնք օբյեկտի արտակարգ իրավիճակի տեսանկյունից շրջանային մասշտաբի արտակարգ իրավիճակի պոտենցիալ վտանգ են ներկայացնում,

բ. կազմակերպությունները, որոնք ռազմական և խաղաղ ժամանակ բարձր վտանգավորություն են ներկայացնում,

գ. կազմակերպությունները, որոնք տեղակայված են սահմանամերձ 10 կիլոմետրանոց գոտում և շրջանային մասշտաբի արտադրանք են թողարկում (աշխատանք են կատարում, ծառայություններ են մատուցում),

դ. կազմակերպությունները, որոնցում ռազմական դրության ժամանակ աշխատողների ընդհանուր քանակը կազմում է 500 և ավելի մարդ, կամ 1 հերթափոխի աշխատողների քանակը՝ 100 և ավելի մարդ,

ե. կազմակերպությունները, որոնց ռազմական դրության ժամանակ պետական կարիքների համար արտադրանքի (աշխատանքի, ծառայությունների) տարեկան ծավալը կազմում է՝

արդյունաբերական - 300 մլն. ՀՀ դրամ և ավելի,

գյուղատնտեսական - 100 մլն. ՀՀ դրամ և ավելի.

3) երկրորդ խմբին դասվողների համար՝

ա. կազմակերպությունները, որոնք հանդիսանում են կարևոր մշակույթի օբյեկտներ,

բ. կազմակերպությունները, որոնք հանդիսանում են կարևոր բնապահպանության օբյեկտներ,

գ. կազմակերպությունները, որոնց ռազմական դրության ժամանակ պետական կարիքների համար արտադրանքի (աշխատանքի, ծառայությունների) տարեկան ծավալը կազմում է՝

արդյունաբերական - 50 մլն.-ից մինչև 300 մլն. ՀՀ դրամ,

գյուղատնտեսական - 50 մլն.-ից մինչև 100 մլն. ՀՀ դրամ:

2. Մույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության քաղաքացիական պաշտպանության և աղետների հետևանքների վերացման շտաբի պետ՝ Ֆ.Բաղդասարյանին և Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի տեղակալ՝ Տ. Թորոսյանին:

3. Հրամանը հասցնել Արցախի Հանրապետության պետական կառավարման և պետական կառավարման տարածքային մարմինների ղեկավարներին, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության քաղաքացիական պաշտպանության և աղետների հետևանքների վերացման շտաբի պետ՝ Ֆ.Բաղդասարյանին և Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի տեղակալ՝ Տ. Թորոսյանին:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՏՆՕՐԵՆ

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 2019 թվականի հունիսի 29-ի
Պետական գրանցման համարը 1111948

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«24» հունիսի 2019 թվականի

N 150-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N 4-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր
հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի հունվարի 22-ի
«Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով
ներկայացնելու մասին պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» N
4-Ն հրամանով սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝
համաձայն հավելվածի:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
ֆինանսների նախարարի
2019 թվականի հունիսի 24-ի N 150-Ն հրամանի

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության
առընթեր հարկային պետական ծառայության պետի
«22» հունվարի 2014թ. N 4-Ն հրամանի

Օրինակելի ձև

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ը N _____

**ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ
ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

_____ « ____ » _____ 20 ____ թ.
(վայրը)

_____ (ՀՎՀՀ՝ _____) (այսուհետ՝ Հարկ վճարող), ի
դեմս _____-ի, որը գործում է _____ հիման վրա, մի
կողմից, և Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝
Հարկային մարմին), ի դեմս _____-ի, որը Արցախի
Հանրապետության ֆինանսների նախարարի 20____թ. _____ N _____
հրամանով իրավագործված է կնքելու սույն պայմանագիրը, մյուս կողմից, կնքեցին սույն
պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Հարկ վճարողը Հարկային մարմին ներկայացնում է Արցախի
Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկային և պարտադիր այլ
վճարների հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և
տեղեկությունները (այսուհետ՝ Հաշվետվություններ) «Հարկերի մասին» Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) N 2 հավելվածով
սահմանված կարգով, իսկ Հարկային մարմինը պարտավորվում է ընդունել
ներկայացված Հաշվետվությունները, եթե դրանք ներկայացված են Օրենքով
սահմանված կարգով և պայմաններով: Սույն պայմանագրով սահմանված
պայմանների պահպանման դեպքում Հարկ վճարողն իրավունք ունի դուրս գրել
Էլեկտրոնային հարկային հաշիվներ:

2. Սույն պայմանագրի համաձայն՝

1) Էլեկտրոնային եղանակով Հարկային մարմին են ներկայացվում Արցախի
Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկային և պարտադիր այլ
վճարների հաշվետվություններ, հաշվարկներ, այլ փաստաթղթեր և տեղեկություններ.

2) ինտերնետային կապի միջոցով իրական ժամանակում Էլեկտրոնային
եղանակով դուրս են գրվում հարկային հաշիվներ.

3) Հարկային մարմնից ստացած սերիա-համարներով Հարկ վճարողների կողմից
կիրառվող հարկային հաշիվների դուրսգրման հատուկ համակարգչային ծրագրով
(այսուհետ՝ բիլինգային ծրագիր) դուրս են գրվում հարկային հաշիվներ:

Սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը ներկայացվում են միայն
Էլեկտրոնային եղանակով, եթե այդ եղանակով Հաշվետվությունների ներկայացումը
պարտադիր է Արցախի Հանրապետության օրենքով և օրենքի հիման վրա ընդունված

նորմատիվ իրավական ակտերով: Սույն պայմանագրի հիման վրա Հաշվետվությունները կարող են էլեկտրոնային եղանակով ներկայացվել Արցախի Հանրապետության օրենքով սահմանված լինելու դեպքում կամ Հարկ վճարողի Հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու ցանկությամբ:

Սույն պայմանագիրը կարող է օգտագործվել միայն էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ դուրս գրելու համար, եթե Արցախի Հանրապետության օրենքին համապատասխան Հարկ վճարողը պարտավոր չէ և չի ցանկանում Հաշվետվությունները ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

Բիլինգային ծրագիր կիրառող անձանց կողմից, սույն պայմանագրին համապատասխան, սույն կետի 3-րդ ենթակետում նշված եղանակով կարող են դուրս գրվել հարկային հաշիվներ, եթե Հարկ վճարողը բավարարում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշները:

3. Սույն պայմանագրում օգտագործված հասկացություններն ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ որ սահմանված է «Հարկերի մասին» և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում ու դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերում:

4. Հարկային մարմինը հավաստում է, որ տնօրինում է Հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ընդունման և ինտերնետային կապի միջոցով իրական ժամանակում հարկային հաշիվների դուրսգրման, ինչպես նաև Հարկային մարմնից ստացած սերիա-համարներով դուրս գրված հարկային հաշիվներում արտացոլված տեղեկությունների ընդունման ծրագրերի:

5. Հարկ վճարողը կարող է ներկայացնել Հարկային մարմնի կողմից հաստատված ժամանակացույցում նշված Հաշվետվությունների տեսակները և (կամ) էլեկտրոնային եղանակով դուրս գրել հարկային հաշիվներ:

6. Սույն պայմանագրի կնքվելուց հետո Հարկային մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հարկ վճարողին է տրամադրում օգտվողի մուտքի անունը և գաղտնաբառը (Login&Password)՝ առձեռն փակ ծրարով: Օգտվողի մուտքի անունը և գաղտնաբառը կիրառվում է էլեկտրոնային Հաշվետվությունների ներկայացման ու ինտերնետային կապի միջոցով իրական ժամանակում հարկային հաշիվների դուրսգրման համար՝ Հարկ վճարողի համապատասխան ներկայացուցչի կողմից համակարգ մուտք գործելու նպատակով:

7. Կողմերն ընդունում են, որ բոլոր լիազորված անձանց սույն պայմանագրի 15-րդ կետի 4-րդ ենթակետում նշված վավեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթերն ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված և (կամ) կնիքով վավերացված փաստաթուղթը: Նշված էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են բնօրինակներ և կարող են օգտագործվել որպես ապացույց դատարանում և վեճերի քննարկման մինչդատական վարությամբ:

8. Կողմերն ընդունում են, որ էլեկտրոնային համակարգում օգտագործվող օգտվողի մուտքի անունը և գաղտնաբառը ու լիազորված անձանց սույն պայմանագրի 15-րդ կետի 4-րդ ենթակետում նշված էլեկտրոնային թվային ստորագրությունները բավարար են էլեկտրոնային փաստաթուղթը ներկայացնողին նույնականացնելու, Հարկ վճարողի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունն ու դրանք երրորդ անձանց կողմից չթույլատրված գործողություններից ու միջամտություններից պաշտպանելու համար:

9. Հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով Հարկային մարմին ներկայացնելը Հարկ վճարողին իրավունք է տալիս Հարկային մարմին չներկայացնել այդ Հաշվետվությունները թղթային եղանակով, իսկ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների մասով համապատասխան իրավական ակտերով

սահմանված դեպքերում՝ չներկայացնել դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ (տեղեկանք):

10. Կողմերն ընդունում են, որ Հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով Հարկային մարմին ներկայացման պահ է համարվում՝

1) հաշվետվությունների, հաշվարկների, այլ փաստաթղթերի և տեղեկությունների մասով՝ Հաշվետվությունների ընդունման համակարգի կողմից Հարկ վճարողին ավտոմատ ուղարկվող ծանուցման մեջ նշված օրն ու ժամը.

2) ինտերնետային կապի միջոցով իրական ժամանակում դուրս գրվող հարկային հաշիվների մասով՝ հարկային հաշիվը էլեկտրոնային ստորագրությամբ վավերացման օրը, ժամը և րոպեն.

3) բիլինգային ծրագրով դուրս գրված հարկային հաշիվների մասով՝ այդ հարկային հաշիվներում արտացոլված՝ սահմանված տեղեկությունների Հարկային մարմնի հարկային հաշիվների համակարգ մուտքագրման օրը, ժամը և րոպեն:

11. Կողմերն ընդունում են, որ օգտագործվող օգտվողի մուտքի անվան և գաղտնաբառի միջոցով էլեկտրոնային համակարգ մուտքագրած լիազորված անձն իրավունք ունի կատարել այն գործողությունները (Հաշվետվությունների ներկայացում, հարկային հաշիվների դուրսգրում), որոնց լիազորությունը ներկայացվել է Հարկ վճարողի կողմից: Հարկ վճարողի ներկայացուցիչների վերաբերյալ սույն պայմանագրով սահմանված տեղեկությունները և փաստաթղթերը, ներկայացուցիչներից յուրաքանչյուրի լիազորության շրջանակները, ներկայացուցիչների և նրանց լիազորությունների շրջանակների փոփոխությունները, լիազորությունների դադարեցումն իրականացվում են Հարկ վճարողին սպասարկող Հարկային մարմին ներկայացվող գրություններով, որոնք համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

12. Սույն պայմանագիրն անհատույց է:

II. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԴՈՒՐՄԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացվում, իսկ հարկային հաշիվներն էլեկտրոնային եղանակով դուրս են գրվում էլեկտրոնային թվային ստորագրության, օգտվողի մուտքի անվան և գաղտնաբառի միջոցով Հարկային մարմնի համապատասխան համակարգ մուտք գործելու ու այդ համակարգում Հաշվետվությունները կամ հարկային հաշիվները ձեռքով ծրագրից տվյալները Հաշվետվության կամ հարկային հաշվի ձևի մեջ փոխանցելու միջոցով լրացնելու միջոցով:

14. Էլեկտրոնային ծածկագիրը և գաղտնաբառը էլեկտրոնային թվային պայմանանշանների եզակի հաջորդականությամբ ներկայացված օգտվողի մուտքի անվան (login), ինչպես նաև գաղտնաբառի (password) համակցությունն է, որը հնարավորություն է տալիս մուտք գործելու Հարկային մարմնի տեղեկատվական համակարգ և թույլ է տալիս տվյալ տեղեկատվական համակարգում նույնականացնել էլեկտրոնային փաստաթուղթը ներկայացնողին, ինչպես նաև ապահովում է էլեկտրոնային համակարգ մուտք գործողին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունն ու պաշտպանվածությունն այլ անձանց կողմից կատարվող գործողություններից:

15. Հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման և (կամ) հարկային հաշիվների էլեկտրոնային եղանակով դուրսգրման համար Հարկ վճարողին անհրաժեշտ տեխնիկական պայմաններն են՝

1) 128 Կբիթ/վրկ և ավել արագությամբ ինտերնետային կապ,

2) Intel Pentium III պրոցեսորին համարժեք կամ ավելի հզոր պրոցեսորով, 512 MB կամ ավելի մեծ ծավալով գործառնական հիշողությամբ, 50 GB տարողությամբ կոշտ սկավառակով և DVD-սարքավորված համակարգիչ,

3) Windows XP, Vista գործառնական համակարգի, Internet Explorer կամ Mozilla Firefox ու Adobe Acrobat Reader կամ Adobe Acrobat Professional ծրագրերի առկայություն,

4) նույնականացման քարտ, որն իր մեջ պարունակում է էլեկտրոնային թվային ստորագրություն կամ հավաստարմագրված հավաստագրման կենտրոնից ստացված էլեկտրոնային ստորագրության և ստորագրության ստուգման տվյալները (սկավառակով),

5) նույնականացման քարտ կարդացող սարք,

6) Հարկային մարմնից ստացված օգտվողի մուտքի անվան և գաղտնաբառի առկայություն:

16. Հաշվետվությունները և հարկային հաշիվները վավերացվում են համապատասխան լիազորություն ունեցող անձանց ինտերնետային ցանցում վավերականությունը հաստատող էլեկտրոնային ստորագրությամբ:

17. Սույն պայմանագիրը կնքված է համարվում դրա բոլոր հավելվածներով: Սույն պայմանագրի որևէ (ցանկացած) հավելված կիրառվում է, եթե պայմանագրի համաձայն դրա գործողությունը համապատասխան հավելվածին վերաբերող մասով կասեցված չէ:

18. Ինտերնետային կապի միջոցով իրական ժամանակում հարկային հաշիվների դուրսգրումն իրականացվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին, այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին և սույն պայմանագրի N 1 հավելվածին համապատասխան: Հարկային մարմնից ստացված սերիա-համարներով հարկային հաշիվների դուրսգրումը իրականացվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին, այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին և սույն պայմանագրի N 2 հավելվածին համապատասխան:

III. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Հարկ վճարողն իրավունք ունի՝

1) էլեկտրոնային եղանակով Հաշվետվությունները ներկայացնել անձամբ (կազմակերպության ղեկավար, անհատ ձեռնարկատեր), կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձի (անձանց) միջոցով:

2) գաղտնաբառի կորստյան, վնասվելու կամ էլեկտրոնային Հաշվետվությունները ներկայացնող կամ դուրսգրվող հարկային հաշիվները վավերացնելու իրավասություն ունեցող անձի փոփոխման դեպքում նոր գաղտնաբառ ստանալ:

3) պահանջել, որ Հաշվետվությունը ներկայացված, իսկ հարկային հաշիվը վավերացված համարվի իր նշված անձի կամ անձանց կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրվելու դեպքում:

20. Սույն պայմանագիրը կնքելու նպատակով Հարկ վճարողը պարտավոր է՝

1) ներկայացնել Հարկ վճարողի կողմից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր կամ հրաման՝ Հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագիր կնքելու, ինչպես նաև օգտվողի մուտքի անվան և գաղտնաբառի օգտագործման ու դրանք Հարկային մարմնից ստանալու իրավասու անձ լինելու մասին,

2) ներկայացնել անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և նույնականացման քարտը (պատճենը) (նույնականացման քարտ չունենալու դեպքում՝

հավատարմագրված հավաստագրման կենտրոնից ստացված էլեկտրոնային ստորագրության և ստորագրության ստուգման տվյալները (սկավառակով)):

21. Հարկ վճարողը պարտավոր է՝

1) սույն պայմանագրի կնքման նպատակով, ինչպես նաև լիազոր անձանց փոփոխման դեպքերում Հարկային մարմնին տրամադրել այն անձանց անուն-ազգանունները, անձնագրային տվյալները, նույնականացման քարտերը (պատճենը) (նույնականացման քարտ չունենալու դեպքում՝ հավատարմագրված հավաստագրման կենտրոնից ստացված էլեկտրոնային ստորագրության և ստորագրության ստուգման տվյալները (սկավառակով)), որոնք իրավունք ունեն Հարկ վճարողի անունից էլեկտրոնային եղանակով ներկայացնել Հաշվետվություններ և դուրս գրել (վավերացնել) հարկային հաշիվներ: Լիազոր անձին վերաբերող տվյալները, էլեկտրոնային ստորագրության և ստորագրության ստուգման տվյալները Հարկային մարմնին ներկայացվում են մինչև Հաշվետվության ներկայացման կամ հարկային հաշվի դուրսգրման ժամանակ այդ անձի կողմից էլեկտրոնային թվային ստորագրության առաջին անգամ կիրառումը.

2) գաղտնաբառի կորստյան, վնասվելու կամ Հաշվետվությունը կամ հարկային հաշիվը վավերացնելու լիազորություն ունեցող անձի (անձանց) փոփոխման դեպքում անհապաղ տեղեկացնել Հարկային մարմնին.

3) լիազոր անձի (անձանց) էլեկտրոնային ստորագրության կամ Հարկ վճարողի հարկային հաշվառման միասնական ռեեստրում ներառվող տեղեկությունների փոփոխման դեպքում մեկօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել Հարկային մարմնին.

4) ինտերնետային կապի բացակայության, ծրագրային խափանումների դեպքում Հաշվետվությունները, բացառությամբ եկամտային հարկի հաշվարկների և գրանցման հայտի, օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել թղթային կրիչով, հարկային հաշիվները դուրս գրել Հարկային մարմնից ստացված հարկային հաշիվների ձևերի լրացմամբ:

22. Հարկային մարմնին իրավունք չունի չընդունել այն Հաշվետվությունները, որոնք ներկայացված են՝

1) Հարկ վճարողի լիազորված անձանց կողմից,

2) Արցախի Հանրապետության օրենքով սահմանված և սույն պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով:

23. Հարկային մարմինը պարտավոր է՝

1) ապահովել իր կողմից տնօրինվող տեղեկատվական համակարգում էլեկտրոնային եղանակով ստացված Հաշվետվությունների, հարկային հաշիվների տվյալների պաշտպանվածությունը և պահպանումը: Էլեկտրոնային եղանակով ներկայացված Հաշվետվությունները և հարկային հաշիվները պահպանվում են թղթային կրիչի վրա լրացվող այդպիսի փաստաթղթերի համար օրենսդրությամբ սահմանված՝ համապատասխան ժամկետներում.

2) գաղտնաբառի կորստյան, վնասվելու կամ այն օգտագործող իրավասու անձի փոփոխման դեպքում նոր գաղտնաբառ տրամադրել, եթե Հարկ վճարողի կողմից ներկայացվել է դիմում: Նոր գաղտնաբառը տրամադրվում է պարզեցված ընթացակարգով՝ դիմումի և սույն պայմանագրի 20-րդ կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթերի հիման վրա՝ դիմումի ներկայացման օրվա ընթացքում.

3) ցանկացած պահին Հաշվետվություն ներկայացնելու, հարկային հաշիվ դուրս գրելու հնարավորությունը մշտապես պահպանելու համար ապահովել համապատասխան համակարգի ֆունկցիոնալությունը, Հաշվետվությունների կամ հարկային հաշիվների ձևերի փոփոխման, համակարգի պրոֆիլակտիկ անջատումների դեպքում էլեկտրոնային Հաշվետվությունների ներկայացման կայքում կամ Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված հաղորդագրության միջոցով նախօրոք տեղեկացնել Հարկ վճարողին.

4) Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Հաշվետվությունների ձևերում և լրացման կարգերում, հարկային հաշիվների ձևերում և լրացման կարգերում

փոփոխությունների դեպքում համապատասխան համակարգում կատարել համապատասխան փոփոխություններ.

5) թղթային կրիչով ներկայացված Հաշվետվությունները տասնհինգօրյա ժամկետում տեղադրել հաշվետվությունների ներկայացման համակարգում:

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

25. Հարկ վճարողն է պատասխանատվություն կրում իր մուտքի անվան և գաղտնաբառի օգտագործման անվտանգության ու գաղտնիության համար:

26. Հարկային մարմինը պատասխանատու չէ էլեկտրոնային ստորագրության վավերության և դրա հետ կապված հարցերի, ինչպես նաև ինտերնետ կայքի կամ Հարկ վճարողի համակարգչային տեխնիկայի և ծրագրերի խափանման հետևանքով հարկային հաշիվները ժամանակին դուրս չգրելու համար: Հարկային մարմինը պատասխանատու չէ ինտերնետային կայքի խափանման կամ անբավարար որակի, էլեկտրոնային ստորագրության վավերության և դրա հետ կապված հարցերի հետևանքով Հաշվետվությունների ժամանակին չներկայացման կամ Հարկ վճարողի համակարգչային տեխնիկայի և ծրագրերի խափանման, էլեկտրոնային ստորագրության, օգտվողի մուտքի անվան կամ գաղտնաբառի կորստյան կամ այլ եղանակով երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքում տեղեկությունների պատշաճ կերպով և սահմանված ժամկետում չներկայացնելու համար, այլ անձանց կողմից հարկային հաշիվներ դուրս գրելու կամ անվավեր ճանաչելու համար:

27. Հարկային մարմնի կողմից պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հարկ վճարողին պատճառված վնասը ենթակա է հատուցման միայն իրական վնասի չափով, և բաց թողնված օգուտը հատուցման ենթակա չէ:

28. Սույն պայմանագրի 21-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջների չկատարման դեպքում առաջացած հետևանքների պատասխանատվությունը կրում է Հարկ վճարողը:

V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

29. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

VI. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

30. Սույն պայմանագրով նախատեսված և Հարկ վճարողի կողմից ներկայացված փաստաթղթերը կցվում են սույն պայմանագրին և համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

31. Սույն պայմանագիրը լրացվում է Հարկային մարմնի համապատասխան գրասենյակում, որից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

32. Մույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և վավեր են կողմերի կողմից ստորագրվելու (իսկ կնիքի առկայության դեպքում՝ կնքվելու) դեպքում:

33. Մույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

34. Մույն պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով, հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

35. Մույն պայմանագրի գործողությունը համարվում է կասեցված այն պահից, որ պահից՝

1) Արցախի Հանրապետության օրենքով Հարկ վճարողը պարտավոր չէ ներկայացնել և դադարեցնում է Հաշվետվությունները էլեկտրոնային ձևով ներկայացնելը,

2) Հարկ վճարողը գրավոր տեղեկացնում է Հարկային մարմնից ստացած սերիա-համարներով բիլինգային ծրագրի միջոցով հարկային հաշիվների դուրսգրումը դադարեցնելու մասին:

Պայմանագրի գործողության ընթացքում գործում են պայմանագրի այն դրույթները, որոնց կիրառումը չի հակասում իրավական ակտերին:

36. Մույն պայմանագրի գործողությունը համարվում է վերականգնված այն պահից, որ պահից՝

1) Արցախի Հանրապետության օրենքի համաձայն Հարկ վճարողը պարտավոր է Հաշվետվությունները ներկայացնել էլեկտրոնային եղանակով,

2) Հարկ վճարողը գրավոր տեղեկացնում է Հարկային մարմնից ստացած սերիա-համարներով բիլինգային ծրագրի միջոցով հարկային հաշիվների դուրսգրման եղանակը կիրառելու մասին:

**VII. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ, ԱՅԼ ՎԱՎԵՐԱՊԱՑՄԱՆՆԵՐԸ
ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

_____	_____
(հարկ վճարողի անվանումը)	հարկային մարմին
_____	_____
(գտնվելու վայրը)	(գտնվելու վայրը)
_____	_____
(էլեկտրոնային փոստի հասցեն)	(էլեկտրոնային փոստի հասցեն)
_____	_____
(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	Կ.Տ.

**ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆ ՏԱՄԱՆԱԿՈՒՄ
ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎՆԵՐԻ ԴՈՒՐՄԳՐՈՒՄԸ**

1. Հարկ վճարողը իրական ժամանակում ինտերնետային կապի միջոցով հարկային հաշիվները (այսուհետ՝ ինտերնետային հարկային հաշիվներ) դուրս է գրում «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, իսկ հարկային մարմինը ընդունում է դրանք, եթե հարկային հաշիվները դուրս են գրված «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով:

2. Ինտերնետային հարկային հաշիվների դուրսգրումը հարկ վճարողը իրականացնում է համապատասխան համակարգչային ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) միջոցով, որը ներբեռնում և տեղադրում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքից:

3. Ծրագիրն առաջին անգամ գործարկվում է հարկ վճարողի հաշվառման համարի, օգտվողի անվանման (login, user name) և գաղտնաբառի (password) մուտքագրումից հետո:

4. Ծրագրի միջոցով հարկային հաշվում լրացվում են պարտադիր լրացման ենթակա տվյալները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի N 254 որոշմամբ սահմանված՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջներով սահմանված տվյալները և վավերապայմանները, հարկ վճարողին անհրաժեշտ այլ տվյալները:

5. Լրացված ինտերնետային հարկային հաշիվը վավերացվելու դեպքում ստանում է սերիա-համար:

6. Ինտերնետային հարկային հաշիվներ դուրս են գրվում այն անձանց միջոցով, որոնք ներկայացվել են հարկային մարմին՝ որպես հարկային հաշիվներ վավերացնելու իրավասություն ունեցող անձինք և որոնց էլեկտրոնային ստորագրությունը գրանցված է հարկային մարմնում: Ինտերնետային հարկային հաշիվները վավերացվում են հարկ վճարողի կողմից լիազորված իրավասու անձի (անձանց) և (կամ) նրա (նրանց) էլեկտրոնային ստորագրությամբ (ստորագրություններով):

7. Էլեկտրոնային հարկային հաշվի ստացումն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու դեպքում հարկ վճարողը այդ հարկային հաշվի վերաբերյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները (տեղեկանքը) հարկային մարմին չի ներկայացնում: Էլեկտրոնային հարկային հաշվի ստացման վավերացումը միաժամանակ դիտվում է որպես «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կապի միջոցով ստացված էլեկտրոնային հարկային հաշվի վերաբերյալ տեղեկության ներկայացում:

8. Էլեկտրոնային եղանակով դուրս գրվող բոլոր հարկային հաշիվները պարտադիր վավերացվում (հաստատվում) են նման իրավասություն ունեցող առնվազն մեկ անձի էլեկտրոնային ստորագրությամբ:

9. Հարկային մարմինն իրավունք ունի չընդունել էլեկտրոնային եղանակով դուրս գրված այն հարկային հաշիվները, որոնք՝

- 1) վավերացվել են հարկ վճարողի կողմից չլիազորված անձի (անձանց) կողմից,
- 2) դուրս են գրվել և վավերացվել «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգի խախտմամբ:

Հավելված N 2

«Հարկային մարմին հաշվետվություններն
էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին»

_____ 20 թ. N _____ պայմանագրի

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՑ ՍՏԱՑՎՈՂ ՄԵՐԻԱ-ՀԱՄԱՐՆԵՐՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ

1. Ավելացված արժեքի հարկ վճարողը պարտավորվում է հարկային մարմնից ստացվող հարկային հաշիվների սերիա-համարներով դուրս գրել հարկային հաշիվներ համակարգչային հատուկ ծրագրերի (այսուհետ՝ բիլինգային ծրագրեր) միջոցով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, իսկ հարկային մարմինը պարտավորվում է ընդունել դրանք, եթե դրանք դուրս են գրված «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով:

2. Սույն պայմանագրի 1-ին կետով նախատեսված հարկային մարմնից ստացվող հարկային հաշիվների սերիա-համարներով հարկային հաշիվներ դուրս գրող ավելացված արժեքի հարկ վճարողը հավաստում է, որ՝

- 1) կիրառում է հարկային հաշիվների դուրսգրման հատուկ ծրագիր (ծրագրեր),
- 2) իր կողմից յուրաքանչյուր օրացուցային ամսվա որևէ (ցանկացած) օրվա ընթացքում դուրս գրվող հարկային հաշիվների թվաքանակը գերազանցում է հազար հատը:

3. Բիլինգային ծրագրի միջոցով դուրս գրված հարկային հաշիվներում արտացոլված տեղեկատվությունը հարկային մարմին ներկայացված լինելու դեպքում բիլինգային ծրագիր կիրառողի կողմից այդ հարկային հաշիվների վերաբերյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները (տեղեկանքը) հարկային մարմին չեն ներկայացվում: Դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը դիտվում է որպես «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կապի միջոցով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ներկայացում:

4. Ավելացված արժեքի հարկ վճարողի կողմից դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների փաթեթը պետք է ստորագրված լինի էլեկտրոնային ստորագրությամբ, որը պետք է գրանցված լինի հարկային մարմնում որպես հարկային հաշիվների սերիա-համարներ ստանալու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրություն:

5. Բիլինգային ծրագրի միջոցով գեներացված (կազմված) հարկային հաշիվները համարվում են դուրս գրված՝ հարկային մարմին ուղարկման ենթակա տեղեկությունները հարկային մարմնի կողմից ստանալու պահից, անկախ այն հանգամանքից, թե այդ հաշիվները էլեկտրոնային կամ թղթային ձևով տրամադրվել են ապրանքներ ձեռք բերողներին (ծառայություններ ստացողներին), թե ոչ:

6. Հարկային մարմնից ստացված՝ հարկային հաշիվների սերիա-համարներով հարկ վճարողի կողմից կիրառվող հարկային հաշիվների դուրսգրման համակարգչային ծրագրերի միջոցով հարկային հաշիվների դուրսգրման դեպքում հարկ վճարողի և հարկային մարմնի միջև տեղեկատվության հոսքը իրականացվում է բացառապես ծրագրային միջոցներով (առանց մարդու միջամտության)՝ ինտերնետային կապի միջոցով կամ հեռահաղորդակցության այլ միջոցով (օրինակ՝ օպտիկա-մանրաթելային կապով), եթե հարկ վճարողը ապահովել է կապի այդ միջոցի կիրառումը»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հունիսի 2019թ.

N 33-Ս

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 55-Ս ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ և 24-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի հունիսի 20-ի գրությունը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 26-ի «ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 55-Ս որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում, որոշման հավելվածի 3-րդ կետում և 3-րդ կետի 2-րդ ենթակետում «2035 թվականի հոկտեմբերի 26-ը» բառերը փոխարինել «2034 թվականի հունիսի 26-ը» բառերով.

2) որոշման 1-ին կետում և որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «2020 թվականի հոկտեմբերի 26-ը» բառերը փոխարինել «2019 թվականի հունիսի 26-ը» բառերով.

3) որոշման հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 4,0 մեգավատտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատոր՝ մեկ հատ, գերմանական «AEM» ընկերության 2018 թվականի արտադրության, SEH 710 LL6 (3-Gen) սինքրոն տիպի, 4,25 մեգավատտ հզորությամբ.

2) հիդրոտուրբին՝ մեկ հատ, «CINK Hydro-Energy» ընկերության 2018 թվականի արտադրության, Pelton TP-V-710-71-5 տիպի, 4,45 մեգավատտ հզորությամբ:»:

2. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2018 թվականի հոկտեմբերի 18-ի N 796-07 գրությամբ տրված երաշխիքի համաձայն Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի առջև ստանձնած 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հունիսի 2019թ.

N 37-Ս

ք.Ստեփանակերտ

«ԱԶԳԱՅԻՆ ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄՐՑՈՒՑԹՈՒՄ
ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԵՎ
ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՄԵՎ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ,
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ
ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ, 44-րդ և 45-րդ հոդվածները և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի «Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգը հաստատելու մասին» N 14Ն որոշումը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. «Ազգային ռադիո և հեռուստատեսություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ճանաչել Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 26-ի «106,3 մեգահերց հաճախությամբ՝ Ստեփանակերտ քաղաքի և մեկ կամ մի քանի շրջանների տարածքում, ընդհանուր ուղղվածության ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզավորման մրցույթ հայտարարելու մասին» N 21-Ս որոշմամբ հայտարարված մրցույթի՝ հաղթող և տրամադրել 106,3 մեգահերց հաճախությամբ՝ Ստեփանակերտ քաղաքի և միաժամանակ մեկ կամ մի քանի շրջանների տարածքում, ընդհանուր ուղղվածության

ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզիա՝ յոթ տարի
գործողության ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի
26-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

**ԱՐՑ ԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«12» հունիսի 2019թ.

N 140-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Արմինե Դանիելյանի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ`

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2016 թվականի ապրիլի 15-ին դեղատնային գործունեության համար անհատ ձեռնարկատեր Արմինե Դանիելյանին տրված թիվ Ա-XX-000299 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին`

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Արմինե Դանիելյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ԲԱՂՅԱՆ

**ԱՐՑ ԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«18» հունիսի 2019թ.

N 148-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԲԵԼԼԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Բելլա Պետրոսյանի (հասցե՝ Արցախի Հանրապետություն, Մարտակերտի շրջան, գյուղ Հաթերք) հայտը բավարարել և տալ դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ. Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ԲԱՂՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«06» հունիսի 2017թ.

N 130

ք.Ստեփանակերտ

**«ՍԵՐՄԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 22-րդ հոդվածների, 34-րդ հոդվածի 7-րդ մասի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի դրույթներով ու հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 04-ի N 05 եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «Սերմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2007 թվականի մայիսի 5-ին տրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի Բ N 000007 լիցենզիայի գործողությունը մինչև լիցենզիայի տարեկան պետական տուրքերի, ինչպես նաև դրանց վճարումը ուշացնելու համար օրենքով սահմանված տույժերի գումարների գծով պարտավորությունների կատարումը:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին ապահովել՝

1) լիցենզիայի գործողության կասեցման մասին տեղեկությունների գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Ժիրայր Միրզոյան

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՄԱՅԻՄ ԱՄՍՈՒՄ ԴԱՂԱՐԵՑՎԱԾ ԵՎ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

05.06.2019թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն	
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը			
ՏՐԱՄԱԴՐՈՒՄ								
1	Հենրիկ Յուրիի Ղուկասյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00716	03.05.2019թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ		
2	ԱԶ Նիկոլայ Վարդգեսի Իշխանյան	ՏՕՆ00717	21.05.2019թ.		ԱՀ	անժամկետ		
ԴԱՂԱՐԵՑՈՒՄ								
3	ԱԶ Գեորգի Բալուղյան	ՏՕՆ00067	31.03.2010թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 03.05.2019թ.	
4	ԱԶ Հովիկ Ծատրյան	ՏՕՆ00432	17.02.2015թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 03.05.2019թ.	
5	Լենրիկ Նորիկի Դանիելյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00547	25.04.2017թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 03.05.2019թ.	
6	Գարիկ Եֆրեմի Սարգսյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00597	02.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 03.05.2019թ.	
7	Նիկոլայ Մադաթի Գաբրիելյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00598	02.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 03.05.2019թ.	
8	ԱԶ Արտյոմ Արմենի Համբարձումյան	ՏՕՆ00622	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 21.05.2019թ.	
9	Կարեն Գառնիկի Ավետիսյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00701	27.12.2018թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 21.05.2019թ.	
ԿԱՍԵՑՈՒՄ								
10	ԱԶ Սուրիկ Ավանեսյան	ՏՕՆ00189	09.04.2012թ.		Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 24.05.2019թ.
11	ԱԶ Լյովա Ալլահվերդիյան	ՏՕՆ00190	09.04.2012թ.	ԱՀ		անժամկետ	կասեցումից հանվել է 31.05.2019թ.	

12	ԱՁ Վիտալի Ստեփանյան	ՏՕՆ00193	16.04.2012թ.	Մեկ մարդատար-տարսի ավտոմոբիլով ուղևորափոխա-դրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 08.05.2019թ.
13	ԱՁ Մասիս Բեգլարյան	ՏՕՆ00208	18.05.2012թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 23.05.2019թ.
14	ԱՁ Լորիկ Առստամյան	ՏՕՆ00361	31.03.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 30.05.2019թ.
15	Նվեր Ռոմանի Հովակիմյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00435	09.03.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 08.05.2019թ.
16	Սամվել Սուրենի Սարուխանյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00487	31.03.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 08.05.2019թ.
17	Ռոբերտ Չերքեզի Բաղդյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00489	31.03.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 16.05.2019թ.
18	Գարիկ Յուրայի Շեկյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00546	25.04.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 30.05.2019թ.
19	ԱՁ Աշոտ Ալեքսանդրի Հայրապետյան	ՏՕՆ00614	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 08.05.2019թ.
20	Օլեգ Ենոկի Իլյազյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00633	09.04.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 08.05.2019թ.
21	Արմեն Յուրիկի Աբրահամյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00634	20.04.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 28.05.2019թ.
22	Մեյրան Էդիկի Պետրոսյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00638	08.05.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 30.05.2019թ.
23	ԱՁ Կարեն Նարինանյան	ՏՕՆ00074	04.05.2010թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 04.05.2019թ.
24	ԱՁ Մասիս Հակոբյան	ՏՕՆ00075	04.05.2010թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 04.05.2019թ.
25	ԱՁ Գուրգեն Հարությունյան	ՏՕՆ00117	04.05.2011թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 04.05.2019թ.
26	ԱՁ Կարո Գրիգորյան	ՏՕՆ00119	04.05.2011թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 04.05.2019թ.
27	ԱՁ Կարո Ամիրջանյան	ՏՕՆ00123	30.05.2011թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 30.05.2019թ.
28	ԱՁ Գարիկ Արզումանյան	ՏՕՆ00378	14.05.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է

							14.05.2019թ.
29	ԱՁ Հենրիխ Մովսեսյան	ՏՕՆ00380	23.05.2014թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխա- դրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցվել է 23.05.2019թ.
30	ԱՁ Կարեն Ահարոնյան	ՏՕՆ00381	23.05.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 23.05.2019թ.
31	ԱՁ Հայկ Աղաջանյան	ՏՕՆ00441	29.05.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.05.2019թ.
32	ԱՁ Միշա Գրիգորյան	ՏՕՆ00442	29.05.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.05.2019թ.
33	Մաքսիմ Պողոսի Հայրապետյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00496	27.05.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 27.05.2019թ.
34	Զատուր Նիկոլայի Անդրասյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00550	15.05.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 15.05.2019թ.
35	Միքայել Կամոյի Գրիգորյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00552	15.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 15.05.2019թ.
36	Արսեն Բորիսի Հարությունյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00554	15.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 15.05.2019թ.
37	Ռաֆիկ Տերենտիի Մովսեսյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00558	24.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 24.05.2019թ.
38	ԱՁ Արմեն Ավանեսյան	ՏՕՆ00559	24.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 24.05.2019թ.
39	ԱՁ Արմեն Բարսեղյան	ՏՕՆ00560	24.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 24.05.2019թ.
40	ԱՁ Արթուրիյ Ղազարյան	ՏՕՆ00561	24.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 24.05.2019թ.
41	Անդրանիկ Զալալի Խաչատրյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00641	08.05.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 08.05.2019թ.
42	Անուշավան Կառլենի Ազիզյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00642	08.05.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 08.05.2019թ.
43	ԱՁ Գարեգին Իվանի Գրիգորյան	ՏՕՆ00643	29.05.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.05.2019թ.

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2019 թվականի մայիս ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

N N	Ֆիզիկական.անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«ՏԲՈՅԱ» ՍՊԸ ԱՀ, Մարտակերտի շրջան, գ. Դրմբուն	9014551 2	ՇԻ- 1088	03.05.2019	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	02.05.2019	
2	«ԳԵՈՐԳԻ ԱՍԾԱՏԲՅԱՆ» ԱԶ ք. Ստեփանակերտ, Ազատամարտ. 21/57	90484179	ՔՓՄ- 1089	10.05.2019	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	03.05.2019	
3	«ԱՍՈՒՏԵՂ» ՍՊԸ ք. Հաղբուք, Ազատամարտ փող, տուն 1	90283624	ՇԻ-1090	17.05.2019	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	13.05.2019	
4	«ՇԻՆԳԼՈՒԲԱԼ» ՍՊԸ ք. Ստեփ, Վ.	90044619	ՇԻ-1091	17.05.2019	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի,</i>	ԼՂՀ	Անժամկետ	16.05.2019	

	Սարոյան 2/22				<i>հասարակական և արտադրական</i>	տարածքում	կետ		
5	«ՄԱՐԻԱՄ ԱՂԱԲԵԿՑԱՆ» ԱԶ ք. Ստեփ, Աշոտ Գրաշի 9	90487142	ՔՓՄ- 1092	24.05.2019	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամ- կետ	20.05.2019	

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2019 թվականի մայիս ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

N N	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի ստեղծման ամսաթիվը (նշել երկարաժամկետի ժամանակահատվածի ավարտման ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում			Լիցենզիայի գործունեության դադարեցումը, կամ թույլտվության կասեցումը, կամ արտոնագրի կասեցումը միջնորդող Լիցենզիայի գործունեության ամսաթիվը
	Անվանումը	ՀՎՀՀ			Միջնորդող Լիցենզիայի սերիան և համարը	Նոր անվանումը		Կասեցման մասին կատարված վերջին լիցենզիայի ստեղծման ամսաթիվը	Կասեցումը հանելու մասին որոշման ամսաթիվը	Կասեցումը հանելու մասին որոշման ամսաթիվը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	
1	«Բեյզ Մեթրլա» ՓԲԸ ք.Ստեփ. Ազատամարտիկներ ի 35ա	90016169	ՔՓՄ- 284	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				12.05.201 9			

2	«Արգիշտի» ՍՊԸ ԼՂՀ Քաշաթաղի շրջան, գ. Սուս	10002815	ՇԻ- 289	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				18.05.201 9		
3	«ՖՈՐ ԴԻՐԵԿՇՆՍ» ՍՊԸ ք. Ստեփ. Սասունցի Դավիթ 15	90023576	ՇԻ- 542	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				20.05.201 9		
4	«ՊՄ ԷԼԵԿՏՐՈ» ՍՊԸ ք. Ստեփ, Լազարևի փող, տուն 48	90039756	ՔՓՓ- 976	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				05.05.201 9		
5	«ՄԱՔՍ-ՎՈՒԴ» ՍՊԸ ք. Ստեփ., Խանեն Բաղ տեղամաս	90013685	ՇԻ- 977	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				26.05.201 9		
6	«Գ Ա Ն Չ» ՍՊԸ ք. Մարտակերտ, Թումանյանի 24	90144158	ՇԻ- 1031	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				17.05.201 9		
7	«Մ-ԳՐՈՒՊ ԷՆԵՐԳՈՍԵՐՎԻՍ» ՍՊԸ ք. Ստեփ. Ադմ Իսակով շենք 5/1	90039583	ՇԻ- 1023	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				06.04.2019		
8			ՇԻ- 1024	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>						
9			ՇԻ- 1025	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>						
10	«ՃԱՆՇԻՆ» ՓԲԸ ք. Ստեփ., Նաբերեժնայա 2	90016752	ՇԻ- 807	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				21.05.2019		
11	«ԱՐՄ - ԱԻԴ ՏՐԱՆՍ» ՍՊԸ ԼՂՀ, Քաշաթաղի շրջան, ք Բերձոր, 1-ին թաղ, շենք 110	10003946	ՇԻ- 956	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				24.05.2019		
12	«ՅԱՅՏ ԱՂՔՅՈՒՐ» ՍՊԸ ք. Ստեփ. Ս. Դավիթ 52/21	90024501	ՔՓՍ- 936	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝					22.05.2019	

				<i>հիդրոտեխնիկական</i>						
13	«Տրդատ» ԱԿ ք. Մարտունի Ուլուքաբյանի 7	90211044	ՇԻ- 441	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					18.04.2019	
14	«ՄԻՔ - ՇԻՆ» ՍՊԸ ք. Ստեփ, Սասունցի Դավթի փող 60/21	90036481	ՇԻ- 973	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>						03.05.2019 (դիմում առ 25.04.2019)
15	«Վաղին Բեզլարյան» ԱԶ ք. Հաղբուք, Ազատամարտիկների 1	91765248	ՇԻ- 1030	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>						17.05.2019 (դիմում առ 15.05.2019)
16	«ԿԱՐԱՏ» ՓԲԸ ք. Ստեփ. Տիգրան Մեծ 20	90038263	ՇԻ- 927	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						24.05.2019 (դիմում առ 22.05.2019)
17	«ՄԼՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ք. Ստեփ, Գ Լուսավորիչ 109	90042174	ՇԻ- 1032	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						24.05.2019 (դիմում առ 23.05.2019)

